

ՀՏՏ 371.31:809.198.1

Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՐԱԾԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԱՃԱՆԱՋՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ գրաճանաչություն, հնցունային լսողություն, նախապրենական շրջան, երաշխավորություններ, հասկանալով կարդալ, I-IV տեղադրության տառամասնիկներ, գծապատկեր, ֆիզիկական զարգացում, սոցիալական պատրաստվածություն, հոլովակամային ոլորտ, խմացական ոլորտ, առարկայական նկարներ, թեմատիկ նկարներ, պատկերազարդ այրուրեն, շարժական տառեր, ընտրովի ընթերցանություն, ուղղորդված ընթերցանություն, բառապատկերներ:

Ключевые слова: грамота, звуковой слух, предалфавитный период, рекомендации, осознанное чтение, частицы букв I-IV, схемы, физическое развитие, социальная подготовка, эмоциональная волевая сфера, сознательная сфера, предметные картинки, тематические картинки, иллюстрационная азбука, передвижные буквы, выборочное чтение, направленное чтение, зрительный образ слов.

Key words: literacy, sound listening skills, pre-alphabetical period, recommendations, reading comprehension, particles of the letters I-IV, schemes, physical development, social preparation, emotional volitional sphere, conscious sphere, subject pictures, thematic pictures, illustrated alphabet, mobile letters, selective reading, directed reading, images of words.

Ա. Պետրօսյան

Методические рекомендации по грамоте

Статья представляет интерес для учителей начальных классов, председателей предметных методических объединений, контролирующих данный сектор, заместителей директора по учебной части и всех тех, кто интересуется данной сферой.

Рассматриваются пути преодоления проблем, возникающие в процессе обучения грамматическому материалу в первом классе. Эти рекомендации частично способствуют развитию умений осознанного чтения первоклассников, формированию письменной речи.

A.Petrosyan Methodical Recommendations on Sonliteracy

The article is of some interest for elementary school teachers, heads of methodical unions, deputy directors of studies and all those who are interested in this topic.

Several ways of overcoming difficulties which appear in the process of teaching literacy in the first grade of public elementary schools are considered.

These recommendations partially contribute to the development and formation of first-graders' comprehension reading and writing skills.

Հոդվածը նախատեսված է հանրակրթական դպրոցների կրտսեր օղակում դասավանդող ուսուցիչների, օղակը վերահսկող համապատասխան առարկայական մասնախմբի նախագահների, ուսումնական գծով փոխստնօրենների և առարկայով հետաքրքրվող անձանց համար: Հոդվածում ներկայացված են գրաճանաչության ուսուցման գործընթացում ծառացած դժվարությունների հաղթահարման որոշ ուղիներ, որոնք արդեն դիտարկվել են հանրակրթական տարրական դպրոցների առաջին դասարաններում: Այդ առաջարկությունները մասամբ նպաստում են առաջին դասարանում սովորող աշակերտների հասկանալով կարդալու կարողությունների զարգացմանը, գրավիր խոսքի ձևավորմանը:

Մեր բազմայա մանկավարժական փորձի արդյունքների վերլուծության, ինչպես նաև վերջին տասնամյակում ուսուցիչների վերապատրաստման գործընթացում ժամանակակից կրթական ծրագրերին ծանոթանալու և դրանցով վերապատրաստվելու, ձեզք բերածք փորձարկելու, դիտարկելու և քաղած հետևողական հիման վրա մենք առաջարկում ենք գրաճանաչության դասի կազմակերպման մեթոդական երաշխավորություններ, որոնց հիման վրա կարող ենք տարածաշրջանում երաշխավորված «Այրեննարանով» առաջին դասարանում սովորող աշակերտների մոտ առանց դժվարությունների կազմակերպել գրաճանաչության գործընթացը: Իսկ եթե գրաճանաչությունը նպատակային և արդյունավետ կազմակերպվի, 2-4-րդ դասարաններում ուսուցումը կդառնա մատնի, հետաքրքրի ու բազմաբռնդակ:

Հուսով՝ ենք՝ ուսուցիչները, հանգամանորեն ծանոթանալով հոդվածին, գրաճանաչության դասավանդման գործընթացում կունենան մեծ հաջողություններ, ինչն էլ կարևորագույն նախադրյալ է կրտսեր օղակում ծրագրային պահանջներն իրականացնելու և կրթական առարկայական շափուղչիներին հասնելու գործընթացում:

Հաշվի առնելով մեր ուսումնասիրությունների և դիտարկումների արդյունքներն ու նզրահանգումները՝ գրածանաչության գործնքացում առաջացած դժվարությունների հաղթահարման նպատակով առաջարկում ենք մի բանի դրույթներ:

1. Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն բանին, թե 6 տարեկան երեխան պատրաստ է արդյոք դպրոցական կյանքի և ուսումնառության համար:

Դպրոցական ուսումնառության պատրաստ լինելը չի նշանակում միայն գրել-կարդալ, հաշվել իմանալ, այլ ընդգրկում է երեխայի անձի բոլոր կողմերը՝ սկսած ֆիզիկական զարգացումից մինչև հատուկ գիտելիքների և կարողությունների առկայությունը:

Առանձնացվում են դպրոցին պատրաստ լինելու հիմնախնդիրների չորս խումբ՝

- սոցիալական
- ֆիզիկական
- հոգակամային
- իմացական

Սոցիալական պատրաստվածությունը իր մեջ ներառում է երեխայի՝ հասակավեցների հետ շփվելու, իր վարքը խմբի կանոններին ենթարկելու, աշակերտի դերը կատարելու պահանջները:

Ֆիզիկական ոլորտն ընդհանուր առողջությունն է: Ընդհանուր ֆիզիկական զարգացումը կանոնավոր քաշն է, հասակը, մկանային տոնուսը, և այլն, որոնք համապատասխանում են 6-7 տարեկան տղաների և աղջկների ֆիզիկական զարգացածության պահանջներին: Այն նաև տեսողության, լսողության, մատների նրբաշարժումների (մոտորիկայի) զարգացածության աստիճանն է, երեխայի նյարդային համակարգի վիճակն է՝ գրգռվածության և հավասարակշռվածության աստիճանը, ընդհանուր առողջական վիճակը: Ֆիզիկական ոլորտի պատրաստվածությունը նշանակում է շարժումների ճշգրտություն, ձեռքի վարժվածություն, աչքի և ձեռքի շարժման համաձայննեցվածություն, գրիչ, մատիտ բռնելու և դրանք գործածելու կարողություն:

Հոգակամային ոլորտը անմիջական ցանկությունները սեփական կամքին ենթարկելու կարողությունն է: Երեխայի համար դժվար է հարմարվել դպրոցական կյանքին, եթե նա չի կարող տիրապետել և դեկապարել սեփական անձը: Նա պետք է ժամանակին դպրոց գա, որոշակի ժամանակահատվածում դասարանում նստի, առաջադրանքները կատարի:

Իմացական ոլորտն իր մեջ ներառում է հետևյալ գործնքացները՝ ուշադրություն, հիշողություն, երևակայություն, մտածողություն, ինչպես նաև ձեռքի մասը մոտորիկայի կամ նրբաշարժումների զարգացածություն, որը նպաստում է խոսքի զարգացմանը, քանի որ խոսքի կենտրոնը և այն կենտրոնը, որը պատասխանատու է մատների շարժումների կոորդինացիայի համար, զիսուղնդում գտնվում են իրար կից և փոխազդում են միմյանց վրա: Նկարչությունը, ապիկացիան, գրաֆիկական վարժությունները կնպաստեն նախադպրոցականների մոտ գրելու հմտության ձևավորմանը: Նախադպրոցական տարիքի ավարտին երեխայի ձեռքը գրելուն պատրաստ է լինում:

Մշված գործնքացները պահանջում են առանձնահատուկ ուշադրություն, քանի որ այս տարիքում դրանք առավելապես ենթակա են զարգացման և կատարելագործման, և դրանց զարգացածության աստիճանից մեծապես կախված է ապագայում երեխայի հարմարված, հոգեբանորեն հասուն և հաջողակ լինելը [1, 45]:

2. Անհրաժեշտ է վերականգնել և կանոնավոր ու նպատակային դարձնել մեր նախկին ավանդությունը. դպրոց հաճախող 6 տարեկան երեխան երեխան դպրոց իրավիրել օգոստոսի վերջին տասնօրյակին՝ իրականացնելով մեր առջև դրված կազմակերպական խնդիրները: Պարզապես նրանք զննացրում չպետք է տեսադաշտում տեսնեն իրենց ծնողներին: Դա միայն կլանագարի գործնքացին: Այդ ընթացքում անհրաժեշտ է՝

- ծանոթացնել աշակերտներին ուսուցչի հետ,
- ծանոթացնել դպրոցական կյանքին և կարգուկանոնին,
- ծանոթացնել աշակերտների իրավունքներին և պարտականություններին,
- սովորեցնել ճիշտ նստել, ձեռք բարձրացնել, խոսելիս կամ պատասխանելիս անհրաժեշտության դեպքում կանգնել,
- մշակել բարձրածայն և հստակ պատասխանելու կարողություն,
- սովորեցնել լսել ուսուցչի խոսքը և կատարել հանձնարարաւությունները,

- սովորեցնել լսել ընկերների պատասխանները և արձագանքնել դրանց,
- սովորեցնել գրքից և գրենական պիտույքներից օգտվելու և դրանց նկատմամբ խնամքի կանոնները:


3. Նախապարբենական շրջանում մեծ տեղ պետք է տալ նրելսաների հնչյունային լսողության զարգացմանը: Երաշխավորենի է այբբենարանում տեղ գտած բոլոր առարկայական նկարները բանավոր ենթարկել հնչյունային և տառային վերլուծության՝ սկսած սեպտեմբերի սկզբից: Փորձը ցույց է տվել, որ հոկտեմբերի վերջին, եթե նրելսաները կարողանան իրենց ոչ միայն անունները, այլև ազգանունները հնչյունային վերլուծության ենթարկել, նրանք կկարողանան նաև ճիշտ, սահուն, հասկանալով կարդալ նաև գրածանաչության շրջանի համար նախատեսված բառերն ու բնագրերը: Այդ գործնարկացը կնպաստի նաև սովորողների ուղղագրական գիտելիքների ձևաբերմանը:

4. Երեխաներն առանց դժվարության ըմբռնում են առարկայի նկարը, որի տակ գծված է նրա գծապատկերը, սակայն չեն ընկալում այն: Ընթերցում են ոչ թե գծապատկերը, այլ ասում են միայն ծանոթ առարկայի անունը, ինչն անհանդութենի է: Ուսուցիչը պետք է հետևողական լինի, որ աշակերտը ցուցամատը դնի ոչ թե **կարկինի** նկարի վրա, այլ՝ նրա տակ նկարված գծապատկերի վրա:



Կ	ա	ր	կ	ի	ն
---	---	---	---	---	---

5. Գրավոր խոսքի զարգացման համար այդ շրջանում ուսուցիչը առաջինից չորրորդ տեղադրության տառամասնիկները /տես՝ ներքոքնյալ նկարը/ աշակերտներին պետք է սովորեցնի այնպես, որ նրանք հասկանան տառամասնիկների չափը, ձևը, դիրքը և իրենք ել պատմեն դրանց չափի, ձևի, դիրքի մասին, որպեսզի տառերը գրելու ժամանակ կարողանան առանց դժվարության կողմնորոշվեն: Վայելու գրելու կարողությունների զարգացման համար մեր դիտարկումները վկայում են, որ ուսուցիչը չպետք է գրատախտակին կամ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված թղթում /եթեն թուղթը մայրենիի տեսքի թուղթը չէ, իսկ մաթեմատիկայի տեսքի թղթում ընդհանրապես չի կարելի/ առանց տող գծելու գրի գոնեն մեկ տառ: Այդ գործնարկացը պետք է տևի նույնիսկ մինչև նրկորորդ դասարանի վերջը: Այս հանգամանքը պայմանավորված է 6 տարեկան նրելսաների կազմաբնախոսական տվյալներով [4, 127]:



6. Թռնմատիկ նկար-պատմությունների ուսուցման ժամանակ երեխաներն ընկալում են նկար-առարկաները և թվարկում դրանք: Ցանկալի է, որ ուսուցիչն առաջարկի աշակերտներին յուրաքանչյուր նկար-առարկայի ավելացնել նաև նրանց ինչպիսի լինելը, դրանցով կազմել նախադասություն. դա ավելի կհարատագնի աշակերտի ակտիվ բառապաշարը և կհեշտացնի հետազայում «Հատկանշ գույց տվող բառ» և «Նախադասություն» համկացությունների ուսուցումը:

7. Այբբենարանում ներկայացված է պայմանական նշանների մի համակարգ, որի համառոտ բանալին տրված է դասագրքերի վերջում: Ուսուցիչը պետք է նախօրոք ծանոթանա այդ համակարգին, որպեսզի դասագրքով աշխատելու ընթացքում այդ նշանները ծանոթացնի երեխաներին, քանզի դրանց գիտակցումից է կախված աշակերտների ակտիվությունը: Պայմանական նշանների կիրառումը այբբենարանում նորություն է: Հայ դպրոցի պատմության մեջ գործածված որևէ այբբենարանում մենք չենք հանդիպել պայմանական նշանների. սովորաբար այբբենարանների հեղինակներն առաջնորդվել են այն սկզբունքով, որ այբբենարանը պիտի մատչելի լինի երեխաներին, այնքան պարզ, որ նրանք առանց մեծերի օգնության, ինքնուրույն կարողանան աշխատել դասագրքով: Այնուամենայնիվ, թեև այբբենարաններում տեղ գտած պայմանական նշաններով աշխատելու համար ուսուցիչները հաճախ օգնում են աշակերտներին՝ հաճախակի բացատրելով և հիշեցնելով դրանց իմաստը, փորձը գույց է տալիս, որ երեխաները յուրացնում են դրանց նպատակադրումները, առաջնորդվում դրանցով: Միաժամանակ մեր դասաւումների ժամանակ կատարած ուսումնասիրություններից եկանք այն համոզման, որ պայմանական նշաններով առաջնորդվելու կարողության ձևափորման գործնթացում ձևափորվում են և զարգանում երեխաների վերացական մտածողությունն ու երևակայությունը: Աշակերտը պետք է ոչ միայն ճանաչի դասագրքում նշված պայմանական նշանները, այլև յուրաքանչյուր նշանի պահանջը ասելուց հետո նոր միայն կարդա տրվածը. օրինակ՝ աշակերտը պետք է ասի նախ՝ պահանջը ըստ պայմանական նշանի՝ «Աջ ու ձախ», հետո՝ մեկնաբանի՝ իինք. գ-ն ավելացնել է աջից, զահ. գ-ն ավելացնել է ձախից, զայլ. գ-ն ավելացնել է ձախից, զարի. գ-ն ավելացնել է ձախից, սագ. գ-ն ավելացնել է աջից. /«Այբբենարան», էջ 115/ և այլն: Այս գործնթացը կնպաստի նաև աշակերտների մոտ մաթեմատիկայից առաջադրանքի պահանջը հեշտությամբ ընկալելուն և ինքնուրույն կատարելուն:

8. Մեր մանկավարժական փորձը համոզում է, որ, աշխատելով վանկային մեթոդով, հեշտանում է երեխաների կարդալու կարողությունների ձևափորման գործնթացը. Երեխաներն ավելի քիչ զանբերով ավելի մեծ հաջողություններ են ձեռք բերում: Նախ սովորեցնում ենք գիտակցորեն կարդալ ձայնավոր+բաղաձայն, հետո՝ բաղաձայն+ձայնավոր տառակապակցությունները:

<i>բա</i>	<i>բու</i>	<i>բի</i>	<i>ար</i>	<i>ուր</i>	<i>իր</i>
<i>կա կու</i>	<i>կի</i>		<i>ակ</i>	<i>ուկ</i>	<i>իկ</i>
<i>սա</i>	<i>սու</i>	<i>սի</i>	<i>աս</i>	<i>ուս</i>	<i>իս</i>
<i>տա տու</i>	<i>տի</i>		<i>ատ</i>	<i>ուտ</i>	<i>իտ</i>

Ու այդպես՝ ամեն նոր տառ անցնելիս աշակերտներն արդեն իմանում են, թե ինչ պետք է սովորեն: Յուրաքանչյուր աշակերտի հետ մյուսները մտքում կրկնելով, բարի, մասնիկների ձևն ու կառուցվածքը դարձնում ենք տեսողական մտապատկերներ: Այդ գործնթացը կարելի է իրականացնել միայն գրաճանաչության այբբենարան շրջանի առաջինից երկրորդ շաբաթներում:

Փորձը գույց է տալիս, որ մաքուր վանկային մեթոդով կարդալ սովորեցնելը խոչընդոտում է հասկանալով կարդալու կարողության ձևափորմանը:

Գրաճանաչության այբբենարան շրջանի երկրորդ տասնօրյակում անհրաժեշտ է կատարել բառակազմական և վաճակազմական աշխատանքներ պատկերագրդ այբուբենից: Ուսուցիչն անխստ պատկերագրդ այբուբենից գուցափայտով հերթով գույց է տալիս այն տառականումքը, որը բառ է կազմում, իսկ աշակերտները ասում են բառը:

Այսպիսին է նաև նորածանոթ տառի ամրակայման, այն պարունակող բառերը և բառակապակցությունները կարդալ սովորեցնելու ուսուցման առաջին քայլերը: Դասի ընթացքում շարժական տառերի օգնությամբ պետք է սովորեցնել կազմել բառեր և ընթերզել: Ընդ որում՝ հմուտ և գիտակ ուսուցիչներն ընտրում են այբբենարանի տվյալ էջի այն բառերը, որոնք, նրանց կարծիքով, երեխաները դժվարու-

թյամբ կկարդան (դրանք հիմնականում բազմավանկ, բազմահնչյուն բառներ են): Նոր հնչյունը ուսուցանելուց հետո, եթե դասարանի մեծադիր տառադարանից (հետո նաև՝ անհատական տառադարաններից) հանվում են ուսուցանվող հնչյունի նախ՝ փոքրատար, ապա՝ մեծատար. Ակսվում է նոր տառն ունեցող բառները կարդալու աշխատանքը: Նախ կատարվում է բարի շուրջ հնչյունային վերլուծական -համադրական աշխատանք, հետո երեխաները հանում են այդ հնչյուններին համապատասխանող շարժական տառները, հաջորդաբար դասավորում, ստանում բառը և կարդում այն միանգամաց: Ընթերցնելու համար սկզբում առաջարկվում են երկինչյուն, եռահնչյուն միավանկ ու երկվանկ բառներ, այնուհետև բազմավանկ բառներ, բառակապակցություններ, նախադասություններ, ապա կապակցված խոր:

9. Մեր մանկավարժական գործնական փորձն ու հատուկ նպատակով իրականացրած գրելու գործընթացի ուսումնասիրությունը մեզ բնրեցին այն համոզման, որ տառագրության կարողության զարգացման համար առաջնությունը տալիս ենք տառը գրել միանգամաց, ոչ թե «մասնատնլով» օրինակ՝ *Ռ, ք.* Այսպիսի ընթացքը համապատասխանում է ուսուցման մատչելիության սկզբունքին և օգնում է երեխաներին առանց դժվարության, առանց լարվածության (թե՛ հոգեկան, թե՛ մկանային) գրել բառները ոչ թե անջատ-անջատ տառնրով, այլ միաձոյլ:

10. Չափամասնափակվել միայն նախապարբեճական շրջանում նախադասության կամ բարի գծապատկերը կազմելով: Անհրաժեշտ է անպայման կազմել նաև այբբենարանի՝ մինչև վերջին էջերի բնագրերի գծապատկերները, այն էլ, զանկալի է, գունային տարբերակումներով: Օրինակ՝ կարմիր գույնով ներկել միավանկ, կապույտով՝ երկվանկ, կանաչով՝ եռավանկ բառները:

11. Նոր նյութի ուսուցման ժամանակ տառը ճանաչել տալուց հետո աշակերտն ինքը պետք է նոր նյութը փորձի ընթերցնել, իհարկե, ուսուցչի ուղղորդմամբ:

12. Դասը մեխանիկորեն սերտելուց խուսափելու համար մեծ տեղ պետք է տալ ընտրովի ընթերցանությանը. կարդալ երկրորդ բառաշարքի առաջին բարի վերջին վանկը կամ՝ կարդալ երկրորդ բառաշարքի երկրորդ բարի առաջին ձայնավորը, կամ՝ կարդալ բնագրի առաջին նախադասության երկրորդ բառը, երրորդ նախադասության երկրորդ բառը, չորրորդ նախադասության վերջին բառը և այլն:

13. Անծանոթ բնագրերի ընթերցման ժամանակ կիրառել ուղղորդված ընթերցանության մեթոդը. յուրաքանչյուր մտքի ավարտից հետո առաջարկել ասել բանալի բառներ, դրանցից մեկը ընտրել որպես բնագրի պլանի կետ /զանկալի է ուղղագրական արժեքը ունեցող կամ նոր բար լինի, և աշակերտներն էլ իրենք տառային վերլուծությամբ «թե՞լադրեն» ուսուցին/: Իսկ բնագրի կարդալուց /աշակերտի կողմից/, բանալի բառնրով պլանը կազմելուց հետո առաջարկել այդ բառնրով կազմել նախադասություններ բնագրի շուրջ: Դրանից հետո ուսուցիչն իր կենդանի ընթերցանությամբ աշակերտներին ուսուցանում է սահուն, արտահայտիչ և արագ կարդալու կարողություններ: Նոր միայն կարելի է անդրադառնալ բնագրին կից նկարների մեկնաբանություններին: Ակզբում սպիրելով գեղեցիկ խոսքը՝ աշակերտը արդեն կկարողանա նկարի երեակայական մասը ոչ միայն ընկալել, այլև այն ներկայացնել ճիշտ ոճով:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսուցիչների և ծնողների մեծամասնությունը պահանջում է երեխաներից շատ կարդալ /10 անգամ նվազագույնը/: Մեր կարծիքով պատճառներից մեկը դա է, որ երեխաները չեն սիրում ընթերցնել: Բացի դրանից՝ դա սերտողական հմտություններն է զարգացնում նրանց մոտ, բայց մաթեմատիկայից երեխաները չեն հասկանում առաջարբանքի պահանջը և առանց որևէ մեկի օժանդակության չեն կարողանում կատարել այն: Երեխաները պետք է ոչ թե նոյն դասը շատ կարդան, այլ պետք է հասկանալով կարդան, որպեսզի շատ բնագրեր կարդան:

14. Հետ այբբենական շրջանում աշակերտները պետք է ունենան լավ զարգացած հնչյունային լսողություն, որպեսզի տարենթրջին նրանք կարողանան գրատախտակին ինքնաթենադրությամբ գրել «Մայրենի 1» դասագրքի շափած ստեղծագործություններից որևէ մեկը և կատարել ինքնաստուգում: Ուսումնասիրություններն ու իրականացրած մշտադարձարկումները հնարավորություն են ընձեռնել եղահանգելու, որ այդ ինքնաստուգման ժամանակ աշակերտը չպետք է թույլ տա հինգից շատ սխալ: Այլապես նրանք կդժվարանան երկրորդ դասարանում պահանջվող ձևով կարդալու ու գրել:

Աշխատանքի բնրումնով երկրորդից չորրորդ դասարաններում մայրենիից և մաթեմատիկայից պարբերաբար գրավոր աշխատանքներ ենք տալիս: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երկ-

բորդ դասարանում քարձը են մաթեմատիկայի և նույնիսկ լիստ ցածր՝ մայրենիի գրավոր աշխատանքների արդյունքները, իսկ 4-րդ դասարանում նոյն ուսուցիչների և նոյն դասարանի աշակերտների մոտ/, ընդհակառակը, ցածր են մաթեմատիկայի և քարձը՝ մայրենիի գրավոր աշխատանքների արդյունքները: Փաստերը վկայում են այն մասին, որ աշակերտների մեծամասնությունը /նկատի չունենք ներառված երեխաներին/ 7 տարեկանում կարողանում է կրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան, այն է՝ թվարկություն, մեծություններ, երկրաչափություն և տերստային լինդիրներ, ապահովել որակական գնահատական. «7-8-9-10 միավոր», իսկ 10 տարեկանում՝ ոչ: Եվ ընդհակառակը, 7 տարեկանում չեն կարողանում առաջադրանքով թեկադրությունից որակական գնահատական ապահովել, իսկ 10 տարեկանում մասամբ են կարողանում: Եթե երեխան 7 տարեկանում կարողանում է հասկանալով բաղադրյալ խնդիր լուծել /հասկանում է, որովհետև ծավալուն չէ, «աչքը չի վախճանում»/, ինչու չպիտի կարողանա դա անել նաև 10 տարեկանում: Հասկանալի է՝ մի քի ծավալով խնդիրները չեն հասկանում, որովհետև նրանց հասկանալով և հաճույքով կարդալու կարողությունները զարգացած չեն:

Մեր կարծիքով 7 տարեկանում մայրենիի արդյունքները լավ չեն լինում, որովհետև աշակերտների մեծամասնությունը չունի զարգացած հնչյունային լսողություն. մանավանդ բազմավանկ բառերով տառենք, երբեմն վաճեներ է բաց թողնում: Ճիշտ գրել անձանոթ տերստը՝ նշանակում է ճիշտ կարդալ անձանոթ նյութը: Գրաճանաչության պատմությունն ու փորձը արդեն ապացուցել են, որ գրաճանաչությունն արդյունավետ է, եթե կարդալու ու գրելու կարողությունները ձևավորվում են համատենի, զուգորդված:

15. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 6 տարեկան երեխան մի գործունեությունից մյուս գործունեությանը չի կարող սահուն կերպով անցնել, երաշխավորվում է դասազործներացում անցկացվող ֆիզկուլտուրայինները, դիդակտիկ խաղերը, քարտային աշխատանքները կազմակերպել դասի բովանդակության շուրջը: Օրինակ՝ ուսուցչուին «*S հնչյուն-տառի» ուսուցման կշռադառնան փուլում առաջարկում է.*

-ասում եմ բառենք. եթե լսվի *ու* հնչյունը բառասկզբում՝ կկանգնեք, բառամիջում՝ կպտտեք գլուխը, բառավերջում՝ կծափահարենք:

16. 6 տարեկան երեխաների մեծամասնությունը հնչյուն-տառի ուսուցման ժամանակ բառաշարքերի բառերը կարդում է որպես բառապատկերներ, մեխանիկորեն, առանց հասկանալու իմաստը: Մեր դասալսումներից ու դիտարկումներից ելնելով՝ առաջարկում ենք ուսուցիչներին բառերը կարդալ հարցնելուց հետո յուրաքանչյուր աշակերտից անպայման պահանջել դրանցով կազմել բառակապակցություններ կամ նախադասություններ:

Իհարկե, ուսուցիչները այդ բառերից մի քանիսը բացատրում են՝ ցույց տալով համապատասխան առարկան:

17. Հասկանալով կարդալու կարողություններ զարգացնելու համար ոչ պակաս կարևորություն ունի բնագրերին կից նկարների մեկնաբանությունները: Որոշ ուսուցիչներ այդ նկարները մեկնաբանում են նախքան բնագրի ընթերցումը: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվեն, որ այդպիսի ուսուցման ժամանակ աշակերտներին գրավում են միայն այնպիսի ստեղծագործությունները, որոնք ունեն նկարագրադրումներ: Իսկ շատ հաճախ էլ, զննելով այդ նկարագրադրումը, մասամբ ընկալում են իմաստը և շրջում թերթը: Մեր կարծիքով, նրանց խանգարում է նաև կարդալու որակական հատկանիշներին /ճիշտ, սահուն, հասկանալով/ համապատասխան կարողություններ չունենալը և ավելի լավ կլիխնի, նաև՝ ուղղորդված ընթերցանության մեթոդի միջոցով կարդալ բնագիրը, հետո՝ անցնել բնագրին կից նկարի ուսումնասիրմանը: Դիտարկումները ցույց են տվեն, որ այդպիսի ուսուցման ժամանակ աշակերտները ավելի մանրամասն են մեկնաբանում նկարը՝ ընկալելով նրա երևակայական բոլոր կողմերը:

18. Առաջին իսկ դասարանից պետք է զարգացնել սովորողների գործնական կարողությունները՝ նրանց հանձնարարելով հետևյալ վարժությունները.

- շարունակի՛ր անավարտ պատմվածքը կամ հնքիաթը,
- հորինի՛ր մի պատմվածք որևէ հերոսի անունից,

- որոշի՞ր,թե որքան գործողություններ կարելի է կատարել որևէ առարկայի հետ, օրինակ՝ կավճի, մատիտի, փայտի, թերթի,

- որևէ առարկայի համար անվանի՞ր որքան հնարավոր է շատ հատկանիշներ և այլն:

Գործնական փարժությունները կատարելիս պահաջիղում է տարբեր վարկածների առաջքաշման նպատակով մտածողության ձկունություն և յուրօրինակություն, ինչպես նաև այնպիսի անձնային որակներ, ինչպիսիք են ակզբունքայնությունը, ազատ ինքնարտահայտումը և այլն [15, էջ 9]:

19. Բարբառախոսությունը և դրանից բխող լեզվական-արտասանական թերությունները ևս լրջորեն խանգարում են գրաճանաչության ուսուցմանը և բացասականորեն ազդում խոսքի մշակույթի վրա:

Պայմանագիրված Ղարաբաղի բարբառի և նրա հնչյունային վերարտադրման ինքնատիպությամբ՝ մեր ուսումնամիջությունները պարզել են, որ երեխաների լեզուն պետք է «բացնի»: Ուսուցչի կենդանի խոսքը, նրա հետևողականությունը՝ աշակերտների խոսքի հղկման նպատակով, կարևոր նախադրյալներ են 6 տարեկան երեխաների կարդալու կարողությունների ձևակիրման գործընթացում:

Բազի ուսուցչի խոսքից՝ մենք կարևորում ենք նաև նկար-առարկաների, բառաշարքների բառերի ճիշտ արտասանությունը, շեշտերի ճիշտ տեղադրությունը. օրինակ՝ աղվես, ոչ թե աղվես, աքլո՛ր, շնփո՛ր, պարա՞ն և այլն:

Կարևորում ենք նաև նախաայբբենական շրջանում, գրական ունկնդրման, տառածանաչության ժամերին աշակերտներին պարբերաբար սովորեցնել ասմունքներ, պատմել:

Գրականություն

1. Գյուլամիրյան Զ.Հ., «Զանգակ» այլբենարանի և նրան կից «Ես սովորում եմ գրել» տպագիր հիմքով տեսրերի (4 մասով) մեթոդական ուղեցույց, Եր., 2003, 178 էջ:

2. Սարգսյան Վ. Ա., Այլբենարան, Եր., 2013, 156 էջ:

3. Տեր-Գրիգորյան Ա., Գրաճանաչության մեթոդիկա, Եր., 1968, 242 էջ:

4. Տեղեկագիր ՀՀ կրթության և գիտության նախարարության, հ.6, 2007, էջ 7-39, 64 էջ:

5. Հայոց լեզու և գրականություն: Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Եր., 2006, 148 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին

Աննա Պետրոսյան – «Մեսրոպ Մաշտոց» համալսարան

E-mail: anna.petrosyan5@gmail.com

Հոդվածը տպագրության է երաշխավորեն խմբագրական կողմանական անդամ, ք.գ.դ. Լ. Հովհաննիսյանը: